

Armeniska

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ



30/10/2017թ.

Skolplatsen

Skolplatsen-ը Բոլնասս համայնքի երեխաների և աշակերտների գրանցման համակարգն է:

Skolplatsen-ի էլեկտրոնային ծառայությունների միջոցով խնամակալները կարող են.

- Հաղորդել իրենց երեխայի հիվանդության մասին
- Դիմել տեղի համար՝ հանրակրթական դպրոց
- Դիմել տեղի համար/չեղարկել տեղը՝ նախադպրոցական հաստատություն
- Դիմել տեղի համար/չեղարկել տեղը՝ արտադպրոցական կենտրոն
- Դիմել մշակութային դպրոցի

Էլ. նույնականացում

Skolplatsen մուտք գործելու համար ձեզ անհրաժեշտ է էլ. նույնականացման համար/BankID: [Էլ. նույնականացման մասին լրացուցիչ տեղեկություններին ծանոթացեք այստեղ](#)

Մուտքգործում

Դուք կարող եք մուտք գործել Skolplatsen սմարթֆոնի, պլանշետի կամ համակարգչի միջոցով՝ այցելելով հետևյալ կայքը՝ <https://bollnas.skolplatsen.se>

Բացակայության/հիվանդության մասին հաղորդում

Եթե ձեր երեխան հիվանդ է կամ բացակա որևէ այլ պատճառով, ապա այդ մասին պետք է հայտնել Skolplatsen-ի միջոցով: ՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵՔ. անհրաժեշտ է հաղորդել մինչև կեսօրվա ժամը 12:00-ը:

Համայնքապետարանի աշխատակից հանդիսացող խնամակալները չեն կարող մուտք գործել իրենց համայնքապետարանի հաշվի միջոցով:

Խնամակալի կոնտակտային տվյալներ

Որպեսզի Skolplatsen-ի էլեկտրոնային փոստի/տեքստային հաղորդագրության միջոցով հաղորդակցությունն իրականացվի, դուք պետք է մուտք գործելուց հետո տրամադրեք ձեր կոնտակտային տվյալները: Դրանք կարող եք տրամադրել Skolplatsen-ում՝ «Այլ կոնտակտային տվյալներ» և «Կարգավորումներ» ընտրացանկերի ներքո: